ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 03 >> 12 2012թ. N: 322-Ա գ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի <<ա>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ կետի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> 7-րդ, 15-րդ և 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավանի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 32 որոշումը

որոշում եմ.

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Նահապետավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի՝ համայնքի կողմից առաջադրված անդամ Սաշա Վարդանյանի լիազորությունները և նրա փոխարեն խորհրդի կազմում հաստատել Գոռ Պետրոսյանին:
2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին>> N 51-Ա որոշման N 92 հավելվածում <<Վարդանյան Սաշա>> բառերը փոխարինել <<Պետրոսյան Գոռ>> բառերով:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝